

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2016 թվականի
փետրվարի 24-ին

«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 1998 թվականի հոկտեմբերի 19-ի ՀՕ-27 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 41-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի «ա» կետի 2-4-րդ տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« - Ստեփանակերտի և շրջկենտրոնների միջև՝ 1.0

- այլ միջրջանային երթուղիներում, այդ թվում՝ Ստեփանակերտ քաղաքի հետ՝ 0.6

- ներշրջանային՝ 0.2» :

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» կետով.

«գ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված երթուղիների համար՝ լրացուցիչ 0.5»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի ապրիլի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից հետո՝ քսան օրվա ընթացքում, Օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետով նախատեսված՝ ավտոբուսներով և միկրոավտոբուսներով գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են իրենց հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել հայտարարություն՝ ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ